

Սուրբ Պետրոսի Հոսիք :

Աւել տաճարն ընդարձակ , ահա տաճար հրաշալի ,
 Առ որով խուն Աստուծոյն մեհեան թրւի տաղաւար .
 Սա 'ի շիրիմ՝ վըհային կանգնեալ սեղան Քրիստոսի :
 Տեսի զբարեպետ եւ շինուած զԵփեսոսին հրաշափառ .
 Վայրափառին սիւնք անկեալ նորուն գնէին յամայի .
 Անդ բորենիք եւ յովագք անցանէին անարգել :
 Տեսի զսրբոյն Սոփիայ գլմբէթս 'ի փայլ արևուն ,
 Յաջողեցաւ ընդ գարիբն այն սրբափայլ ինձ յառել
 Մինչ աղօթիկերք անդ կային մահմետականք անարք նորուն :

Այլ դու միայն կաս 'ի հինս եւ նոր տաճարս եւ սեղան ,
 Դու միայնակ կաս կանգուն , տաճար բնաւից գերածայր ,
 Դու լոկ սրբոյն Աստուծոյ եւ ճըշմարտին քաջ արժան :
 Ո՛ր յերկրաւոր տաճարաց գեղոյդ մըտցէ 'ի պայքար .
 Յորմէ հեաէ Սիոնին յաւեր դարձաւ սուրբ խորան
 Եւ ըզփառացն իւր եթող անք բնակութիւն ըզնախկին ,
 Ահեղութիւն , մեծութիւն եւ փառք եւ գեղ աստանոր
 Համարմբեալ ընդ յարկաւդ յաւերժական տարածին ,
 Աւր սուրբ ուանխաւուն պաշտի ճըշմարտութիւնն երկնաւոր :

Մուտ աղէ , ոչ ընկճեսցիս ոչ մեծութեամբ դու նորին ,
 Ոչ առ նորայն նուազել , այլ առ լայնել մրտաց քոց
 Հրակայարար աճելով 'ի ձեռն ոգւոյ տաճարին .
 Զի եւ ոչ այլուր դացէ տեղի պատկան ըզճից քոց
 Բայց 'ի դադարն ուր քո յոյսք յանմահութիւն վերբերին :
 Օր եկեսցէ եւ տեսցես , թէ ոչ զբայցիս անարժան ,
 Տեսցես դու գեմ յանգիման զաստուածութիւնն իսկ անձառ ,
 Որդէս զիւրն աստ տեսանես ըզսրբութիւն սրբութեան ,
 Տեսցես եւ մի հողացիս յաջացն ահէ վեհափառ :

Յառաջ խաղաս . . . եւ աճէ նա յառաջելոց եւս քան զես ,
 Որպէս այն բարձրք կոհակ պրարատեան զառ 'ի վեր
 Հսկայակերպ դայ 'ի յայտ ցորչափ պընգիսն 'ի վերելս ,
 Աճել աճէ հարազատ վայելչութեամբն աւրնթեր .
 Դարձակութիւն իմն եւ չափ տիրէ համայն անդ գողցես :
 Վէմբ պատուականք , գեղանկար պատկերք , սեղանք շողոպուն
 Ի քոց ոսկեակ կանթեղաց , եւ յաղթականն այն գլմբէթ
 Հանուրց երկրի շինուածոց՝ թէ եւ սոքա զտակ առնուն
 Գեանոյ վերայ , անգամբար նորայն սլանայ ծայր եւթ :

Այլ գեռ ըզբնաւ ոչ տեսեր , ճ'ն քակեա լոյծ ըզբողոր ,
 Եւ յառեալ մի առ մի տես զամենայնին ըզմասունս :
 Իբր ովկիան բիւր յափուանն գործէ ծոց գողաւոր
 Ական տեսոյ արժանիս . ծրարեա զհոգւոյդ քո զաչկունս ,
 Ուրոյն ուրոյն գիտելով , դիր սանձ մրտաց զգուշաւոր ,
 Մինչև սրբաիդ քո հարցին գեղապատշաճ տիպք նորուն ,
 Եւ փոքր առ փոքր կրթեալ 'ի տեսութիւն բերիցես
 Ըզհրաշափեղ պատկերին զանհամեմատ մեծութիւն
 Զոր 'ի սկզբան չկարացեր գրաւել աչացդ 'ի մի տես ,

Ոչ առ նորին ինձ՝ այլ քոյ զգայականիդ թերութեան ,
 Որում պատկերք եւս ընդ եւս կերպարանին արտաքոյ ,
 Եւ ջրաւեն 'ի մեզ բանք ներքին զգայմանց գող թարգման .
 Հանգոյն եւ յայտ սրբալի ահեղախորտա շինուածոյ
 Ըլայեալ աչացս 'ի պատրանս ըմբռնին մեծ պակուցման ,
 Երբ մեծութիւնն ահեղ խաղ զփոքրակութեամբս առնէ զմեր :
 Մինչև տակաւ ընդլայնեալ մերոց մրտաց ընդ նրմին
 Դարձակեսցուք եւ զհոգիս քաջաստուք այնց ընել ,
 Որոց լոկով զարմացմամբ կայսք յառաջն 'ի զընին :

Արձանացիր 'ի միտ առ , զի մեծ են շահք զիտմանդ այգ
 Քան զըսքանչանս վայրագար կամ զահ տեղոյն սրբութեան
 կամ զհիւանդուն ընդ արուեստ ճարտարութեան որ կան անդ
 եւ ընդ ճարտարս որք զհանուրց վեհն ամբարձին զայն արձան ,
 որ ոչ ձեռին առաջնոց եւ ոչ միտաց եկն 'ի յայտ :
 Վըսեմութիւն համբրէն 'ստտանոր կայ հոլանի .
 Ատուեստ կարեն մի առ մի քակել հանել միտք մարդոյ
 Զոսկեղնիկ աւաղոյն առնուլ ըզլափ պայմանի ,
 եւ գիտել որքան զօրեն մեծաձեծ գիւտք հանձարոյ :



ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի սոսոր անուանու զաղղիայի շոգենաւին
 զի պարահած ժանտախտին վրայ բանի մը
 խորհրդածուելիաներ ' :

ՍԱՐՍԻԼԻԱՅԻ առողջութեան ա-
 տեանին լրագրէն իմացանք որ Լուք-
 սոր շոգենաւը երբոր Սարսիլիայի
 նաւահանգիստը հասեր է , իր նաւաւ
 տիներէն մէկը Պուատրոն անուանով
 մաքրարանը թողեր է՝ տեսակ մը
 հիւանդութենէ բռնուած ըլլալուն
 համար , որուն արեւելեան ժանտախտ
 ըսեր են : Ըս նիւթս քննելը ոչ միայն
 Լիզիպտոսի քառասնորդական զգու-
 շութեանը համար օգտակար է , հա-
 պա բժշկական արուեստին համար ալ .
 վասն զի աս զիպուածն ալ ժանտախ-
 տին փոխադրական ըլլալը ցուցնելու
 կը ծառայէ : Մենք աս բանիս վրայ ա-
 ւելի որոշ տեղեկութի մը տալ ուզե-
 լով՝ հոս մեր խորհրդածութիւնները կը
 դնենք , ու ասոնք խոհեմ՝ անկողմնա-
 սէր ու պաշարմունքէ ազատ մարդ-
 կանց դատաստանին տակը կը ձգենք :

Լուքսորին բռնած ճամբան զիտե-
 լով՝ կը տեսնենք որ գեկտեմբերի 7^{ին}
 Սալթա իրեն նաւաստիներէն մէկը
 մաքրարանը թողեր է . նոյն ամսուն
 12^{ին} Ղըքսանդրիա հասած ժամա-
 նակը մէկ օրիչ նաւաստի մըն ալ հոն
 թողուցեր է՝ նոյն հիւանդութենէն
 բռնուած : Գեկտեմբերի 19^{ին} Պե-
 րութէն Ղըքսանդրիա գալու ժա-
 մանակը՝ Պուատրոնը հիւանդացած

1 Տես երես 180 :

ըլլալով՝ շոգենաւին բժիշկը կը հաս-
 տատէ թէ փտեալ ջերմ՝ է : Ըմսուն
 24^{ին} , այսինքն հիւանդանալէն վեց օր
 ետքը , ձախ աճուկը ուռեցք մը կը
 հանէ հիւանդը :

Ըս բաներէս (որ Սարսիլիայի լը-
 րագրին մէջ իբրև ստոյգ կը պատ-
 մուին , ու մենք ալ չենք տարակուսիր
 ասոնց վրայ) կը հետեւի որ Լուքսոր
 ըսուած շոգենաւը գեկտեմբերի 7^{ին}
 որ դեռ Սալթա կեցած էր , ինչուան
 գեկտեմբերի 19^ը իրեք հիւանդ ու-
 նեցեր է նաւուն մէջ , որոնցմէ երկու-
 քը փտեալ ջերմէ բռնուած են եղեր .
 երրորդին հիւանդութիւն ալ ինչուան
 հիւանդութե վեցերորդ օրը փտեալ
 ջերմ՝ կը կարծուի եղեր , ու երբոր
 ուռեցքը ելեր է՝ ան ատեն բժիշկը
 կամ նաւապետը կատկածի գացեր են
 թէ ասիկայ ժանտախտ կրնայ ըլլալ .
 ետքը սոյն կատկածը Սարսիլիայի
 մաքրարանին բժիշկը իբրև ստոյգ
 հաստատեց : Բայց մեզի բուրոյմին
 հակառակ կ'երևնայ աս կարծիքը ,
 վասն զի թէ որ իրենց կարծեացը հի-
 մը ան է թէ հիւանդը ուռեցք ալ ու-
 նեցաւ , ասիկայ բաւական չէ , ինչու
 որ խուլաւոր ջերմն ալ ուռեցք ունի .
 միայն աս տարբերութիւնը կայ որ
 հիւանդութիւնը առաջ երթալէն ե-
 տե կ'երևնայ ուռեցքը : . . . Պուա-

1 La fièvre typhoïde.
 2 խուլաւոր ջերմին Եւրոպացիք յոճարէն բա-
 սով typhus կըսեն : Պ . Պետանը ցուցնել ուզե-
 լով թէ Պուատրոնին հիւանդութիւնը արեւելեան
 ժանտախտ չէր , հապա փտեալ ջերմէր , կ'ըսէ
 թէ հիւանդին վրան ելած ուռեցքէն պէտք չէ խա-
 բուիլ , վասն զի նաև փտեալ ջերմ ունեցողը կրնայ